



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ**

№ 74 Լ

**ՀՐՇԵՋ-ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N°1309 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «դ» ենթակետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 16-ի N° 457-Ն օրենքի 4-րդ հոդվածի 13-րդ մասի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N° 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն.

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ**

1. Հաստատել հրշեջ-շարային պատրաստության նորմատիվային ցուցանիշները՝ համաձայն հավելվածի:

2. Հատուկ հրշեջ և հրշեջ-փրկարարական ջոկատների հրամանատարներին՝ յուրաքանչյուր օր հերթապահ խմբի (հերթափոխի) օրակարգի ազատ ժամանակի

ընթացքում իրականացնել հրշեջ-շարային պատրաստության նորմատիվային ցուցանիշների առնվազն մեկ վարժություն:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Հրշեջ-շարային պատրաստության նորմատիվային ցուցանիշները հաստատելու մասին» №1309 հրամանը:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալ, փ/ծ գեներալ-մայոր Կ. Յուզույանին:

5. Հրամանը ծանոթացնել իրավասու ծառայողներին և աշխատողներին:

**Հաստատված է էլեկտրոնային  
ստորագրությամբ**

**Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՐՇԵԶ-ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ

Հ/Հ	Վարժությունը	Նորմատիվային ժամանակը (վայրկյան)			Վարժության կատարման պայմանները
		գերազանց	իմ	սովորիմ	
1	2	3	4	5	6
1.	Մարտական հագուստի և հանդերձանքի հագնելը (առանց ավտոմեքենա նստելու)՝ հրշեջ-փրկարարի կողմից ա) ամռանը բ) ձմռանը օղակի կազմով ա) ամռանը բ) ձմռանը	18 22  25 30	22 26  30 35	26 30  35 40	1. Մարտական հագուստը և հանդերձանքը դասավորվում է (հրշեջի կողմից իր հայեցողությամբ) նախատեսված սեղանի կամ դարսակի վրա: Գոտին կացնի հետ դրվում է հագուստի տակ: Ձմռանը սաղավարտ դրվում է հարմար դիրքում: Ձեռնոցները դրվում են բաճկոնի գրպաններում: 2. Հրշեջ-փրկարարները գտնվում են մարտական հագուստից և հանդերձանքից մեկ մետր հեռու (դեմքով դեպի հագուստը): 3. Սկիզբ. հրամանի արձակում: 4. Ավարտ. մարտական հագուստն ու հանդերձանքը հագած վիճակում է, բաճկոնի բոլոր կոճակները կոճկված, գոտին կապված և ծայրը մտցված ճարմանդի տակ, սաղավարտի կզակային գոտին ամրացված:
2.	Ջերմասանդրադարձիչ հագուստի հագնելը ա) ամռանը բ) ձմռանը	70 74	75 79	80 84	1. Ջերմասանդրադարձիչ հագուստը պարկից հանված է և հարմար դիրքով դրված սեղանին: 2. Մարտական հագուստ և հանդերձանք հագած հրշեջ-փրկարարը (գոտին կապած) կանգնած է ջերմասանդրադարձիչ հագուստից մեկ մետր հեռու՝ դեմքով դեպի այն: 3. Սկիզբ. հրամանի արձակում:

					<p>4. Ավարտ. հրշեջ-փրկարարը կիսակոմբինիզոնը հագած և ուսափոկերը կապած, հրշեջ գոտին կիսակոմբինիզոնի վրայից կապած: Մետաղապատ կտորով բաճկոնը հագած և բոլոր կոճակները կոճկված, դիմակ-սաղավարտը բաճկոնին կոճկված, ձեռնոցները ձեռքերին հագած:</p> <p><i>Ծանոթություն.</i></p> <p>Դիմակ-սաղավարտը բաճկոնին կոճկվում է միայն առջևի մասից, ձեռնոցների ձգող գոտիները չեն ամրացվում:</p>
3.	<p>Տագնապով հավաք և մեկնում նստելով ավտոմեքենաները, ավտոկայանատեղի դարպասներից դուրս. օղակի կազմով</p> <p>ա) ամռանը բ) ձմռանը</p> <p>խմբի (հերթափոխի) կազմով՝ երկու հրշեջ ավտոմեքենայով.</p> <p>ա) ամռանը բ) ձմռանը</p>	<p>30 35</p> <p>35 40</p>	<p>35 40</p> <p>40 45</p>	<p>40 45</p> <p>45 50</p>	<p>1. Մարտական հագուստ և հանդերձանքը դասավորվում է այնպես, ինչպես նշված է թիվ 1 վարժությունում:</p> <p>2. Անձնակազմը գտնվում է հերթապահության վայրում և տեղակայվում է կամայական:</p> <p>3. Սկիզբ. Տագնապի ազդանշան: Ավտոմեքենաներում նստելը կատարվում է միայն մարտական հագուստը և հանդերձանքը լրիվ հագնելուց հետո:</p> <p>4. Ավարտ. ավտոմեքենայի հետևի անիվները գտնվում են ավտոկայանատեղիի դարպասներից դուրս, յուրաքանչյուր մարտական հաշվարկի անձնակազմը գտնվում է ավտոմեքենաների մեջ:</p> <p><i>Ծանոթություն.</i></p> <p>1. Այն ջոկատներում, որտեղ զորանոցը գտնվում է 2-րդ հարկում և ունի վայրէջքի սյուն, նորմատիվային ժամանակին ավելացվում է 7 վայրկյան, վայրէջքի սյան բացակայության դեպքում՝ 15 վայրկյան:</p> <p>2. ՈՒՐԱԼ, ԿԱՄԱՂ, ԻՍՈՒՂՈՒ 3.5տ 4x4 և ԻՍՈՒՂՈՒ 10տ մակնիշի հրշեջ ավտոմեքենաների մարտական հաշվարկը վարժությունները կատարելիս նորմատիվային ժամանակին ավելացվում է 2 վայրկյան:</p>
4.	<p>Վերելք մակնիշի հրշեջ ավտոսանդուղքով.</p> <p>15 մետր 20 մետր 25 մետր 30 մետր 35 մետր 40 մետր 45 մետր</p>	<p>18 24 31 39 47 56 66</p>	<p>20 27 35 44 53 63 74</p>	<p>23 31 40 50 60 71 82</p>	<p>1. Հրշեջ ավտոսանդուղքը տեղադրված է և բացված՝ հանձնարարված բարձրությամբ: Հրշեջ-փրկարարը կանգնած է հրշեջ ավտոսանդուղքի մոտ:</p> <p>2. Սկիզբ. հրամանի արձակումը:</p> <p>3. Ավարտ. հրշեջ-փրկարարը երկու ոտքով կանգնած է հանձնարարված բարձրության աստիճանին և զսպանակակեռիկով ամրացված է:</p> <p><i>Ծանոթություն.</i></p> <p>1. հրշեջ ավտոսանդուղքով 30 մետր և ավելի բարձրություն բարձրանալիս. ա) սանդուղքը հենում են շենքի կառուցատարրերին, բ) հրշեջ-փրկարարները վարժությունը կատարում են բացառապես համապատասխան ապահովման դեպքում:</p> <p>2. Ձմռան պայմաններում վարժությունը կատարելիս յուրաքանչյուր 5մ բարձրության համար նորմատիվային ժամանակին ավելացվում է 1 վայրկյան:</p>

					3. Վերաբերվում է առանց գամբյուղի հրշեջ ԱՍ-ին:
5.	Գրոհող սանդուղքի տեղափոխումը և կախումը ուսումնական աշտարակի 2-րդ հարկի պատուհանից. ա) ամռանը բ) ձմռանը	7 10	9 12	11 14	1. Մեկնարկային գիծը 32մ 25սմ հեռու է ուսումնական աշտարակի հիմքից: Գրոհող սանդուղքը դրված է՝ յոթերորդ աստիճանը մեկնարկային գծին համընկած վիճակում: Հրշեջ-փրկարարը կանգնած է մեկնարկային գծից այն կողմ: 2. Սկիզբ. հրամանի արձակումը: 3. Ավարտ. գրոհող սանդուղքը կախված է ուսումնական աշտարակի 2-րդ հարկի պատուհանից: Հրշեջ-փրկարարը ձախ ոտքով կանգնած է առաջին աստիճանի վրա և երկու ձեռքով բռնված է սանդղակայից:
6.	Վերելք կախված գրոհող սանդուղքով ուսումնական աշտարակի 4-րդ հարկ ա) ամռանը բ) ձմռանը	18 21	20 23	22 25	1. Գրոհող սանդուղքը կախված է ուսումնական աշտարակի 2-րդ հարկի պատուհանից: Հրշեջ-փրկարարը ձախ ոտքով կանգնած է առաջին աստիճանին և ձեռքերով բռնված է սանդղակայից: 2. Սկիզբ. հրամանի արձակումը: Ավարտ. հրշեջ-փրկարարը երկու ոտքով դիպել է 4-րդ հարկի հատակին:
7.	Վերելք գրոհող սանդուղքով ուսումնական աշտարակի 4-րդ հարկ ա) ամռանը բ) ձմռանը	26 30	28 32	34 38	1. Մեկնարկման գիծը 32մ 25սմ հեռու է ուսումնական աշտարակի հիմքից: Գրոհող սանդուղքը դրված է՝ յոթերորդ աստիճանը մեկնարկման գծին համընկած վիճակում: Հրշեջ-փրկարարը կանգնած է մեկնարկային գծից այն կողմ: 2. Սկիզբ. հրամանի արձակումը: 3. Ավարտ. հրշեջ-փրկարարը երկու ոտքով դիպել է 4-րդ հարկի հատակին:
8.	Վերելք տեղադրված եռաձունկ սանդուղքով ուսումնական աշտարակի 3-րդ հարկ կամ երկհարկանի շենքի տանիք. ա) ամռանը բ) ձմռանը	7 (10) 9 (12)	9 (12) 11 (14)	11 (14) 14 (17)	1. Եռաձունկ սանդուղքը տեղադրված է և ամրացված: Առաջին հրշեջ-փրկարարը կանգնած է աստիճանի մոտ, ձեռքերով բռնած սանդղակայից, իսկ ձախ ոտքը դրված է առաջին աստիճանին: Երկրորդ հրշեջ-փրկարարը կանգնած է աստիճանի և պատի միջև, սանդուղքը սեղմելով պատին՝ իրականացնելով անվտանգության ապահովումը: 2. Սկիզբ. հրամանի արձակումը: 3. Ավարտ. առաջին հրշեջ-փրկարարը երկու ոտքով դիպել է ուսումնական աշտարակի երրորդ հարկի հատակին կամ երկհարկանի շենքի տանիքին: Երկրորդ հրշեջ-փրկարարը կանգնած է աստիճանի և պատի միջև՝ իրականացնելով անվտանգության ապահովումը: <i>Ծանոթություն.</i> 1. Չոր փողրակագծով և նրան ամրացված փողակով վերելքի դեպքում նորմատիվային ժամանակին ավելացվում է 5 վայրկյան: 2. 65մմ կամ 66մմ տրամագծի չոր փողրակագծով բարձրանալու դեպքում նորմատիվային ժամանակին ավելացվում է 8 վայրկյան:

					3. Փակագծերում նշված է ճապոնական արտադրության երեք ծնկանի սանդուղքի ցուցանիշները:
9.	Եռաձունկ սանդուղքի հանելը, տեղափոխելը և ուսումնական աշտարակի երրորդ հարկ տեղադրելը ա) ամռանը բ) ձմռանը	16 (21) 20 (25)	18 (23) 22 (27)	20 (25) 24 (29)	1. Եռաձունկ սանդուղքը տեղադրված է և ամրացված է ավտոմեքենայի վրա, որը գտնվում է ուսումնական աշտարակից 30մ հեռու (հրշեջ մեքենանայի ետնամասը գտնվում է 30 մետրանոց նշագծի վրա): Հետևի փողոակային սայլակները հանված են: 2. Վարժությունը կատարվում է երկու հրշեջ-փրկարարի մասնակցությամբ, որոնք գտնվում են ավտոմեքենայի հետևի անիվի մոտ: 3. Սկիզբ. հրամանի արձակում: 4. Ավարտ. Եռաձունկ սանդուղքը տեղադրված է և ամրացված: Առաջին հրշեջ-փրկարարը կանգնած է կես քայլ աստիճանից հեռու դեմքով դեպի նա, երկրորդ հրշեջ-փրկարարը կանգնած է աստիճանի և պատի միջև: <i>Ծանոթություն.</i> 1. ԻՍՈՒՂՈՒ (4x4 և 10տ), ԿԱՄԱՁ, ՈՒՐԱԼ, ՁԻԼ-131 մակնիշի և այլ նմանատիպ հիմնական հրշեջ ավտոմեքենաներով վարժությունը կատարելու դեպքում նորմատիվային ժամանակին ավելացվում է 8 վայրկյան: 2. Փակագծերում նշված է ճապոնական արտադրության եռաձունկ սանդուղքի ցուցանիշները:
10.	Եռաձունկ սանդուղքի հանելը, տեղափոխելը և նրանով բարձրանալը ուսումնական աշտարակի 3-րդ հարկ կամ երկհարկանի շենքի տանիք. ա) ամռանը բ) ձմռանը	24 (31) 28 (35)	29 (36) 33 (40)	32 (39) 36 (43)	1. Եռաձունկ սանդուղքը հավաքված և ամրացված է ավտոմեքենայի վրա, որը գտնվում է 30 մետր հեռու ուսումնական աշտարակից (հրշեջ մեքենանայի ետնամասը գտնվում է 30 մետրանոց նշագծի վրա): Հետևի փողոակային սայլակները հանված են: 2. Վարժությունը կատարում է երկու հրշեջ-փրկարարների մասնակցությամբ, որոնք գտնվում են ավտոմեքենայի հետևի անիվի մոտ: 3. Սկիզբ. հրամանի արձակում: 4. Ավարտ. Եռաձունկ սանդուղքը ամրացված է, առաջին հրշեջ-փրկարարը երկու ոտքով դիպել է ուսումնական աշտարակի 3-րդ հարկի հատակին կամ երկհարկանի շենքի տանիքին, երկրորդ հրշեջ-փրկարարը կանգնած է պատի և աստիճանի միջև՝ իրականացնելով անվտանգության ապահովումը: <i>Ծանոթություն.</i> 1. ԻՍՈՒՂՈՒ (4x4 և 10տ), ԿԱՄԱՁ, ՈՒՐԱԼ և ՁԻԼ-131 մակնիշի ավտոմեքենաներով վարժությունը կատարելու դեպքում նորմատիվային ժամանակին ավելացվում է 8 վայրկյան: 2. Փակագծերում նշված է ճապոնական արտադրության երեք ծնկանի սանդուղքի ցուցանիշները:

11.	<p>Հրշեջ հիդրանտին տեղադրված հրշեջ ջրասյունակից 40 մետրանոց փողրակագծի փռումը (փողակով). ա) ամռանը բ) ձմռանը</p>	<p>15 17</p>	<p>17 19</p>	<p>19 21</p>	<p>1. Հրշեջ գույքը դասավորված է հրշեջ ջրասյունակից 1 մետր հեռու: Հրշեջ-փրկարարը կանգնած է գույքի մոտ: 2. Սկիզբ. հրամանի արձակում: 3. Ավարտ. փողրակագիծը փռված է, փողակը միացված փողրակագծին: <i>Ծանոթություն.</i> Փողրակագիծը երկարացնելու դեպքում յուրաքանչյուր 20 մետր փողրակի համար նորմատիվային ժամանակին ավելացվում է 8 վայրկյան:</p>
12.	<p>Հրշեջ ավտոմեքենան հրշեջ հիդրանտին տեղադրելը՝ միացնելով ներքաշող փողրակները</p>	<p>28</p>	<p>31</p>	<p>34</p>	<p>1. Հրշեջ ջրասյունակը դրված է հրշեջ ավտոմեքենայի մեջ և ամրացված է: Հրշեջ ավտոմեքենայի խցիկների դռները փակ են, հրշեջ ավտոմեքենայի պոմպի ներքաշող կարճախողովակին միացված է երկճյուղանի բաժանարարը և այն գտնվում է հրշեջ հիդրանտից 3մ հեռավորության վրա: Հրշեջ-փրկարարը կանգնած է ավտոմեքենայում տեղադրված հրշեջ ջրասյունակի խցիկից 1 մետր հեռու: 2. Վարժությունը կատարվում է 2 հոգուց բաղկացած անձնակազմով (վարորդ և հրշեջ): 3. Սկիզբ. հրամանի արձակում: 4. Ավարտ. հրշեջ ջրասյունակը պտտված է մինչև վերջ հրշեջ հիդրանտի խողովակասյան վրա: Ներքաշող փողրակը միացված է հրշեջ ջրասյունակին և պոմպի ներքաշող կարճախողովակին միացված երկճյուղանի բաժանարարին: Վարորդը կամ նրա պարտականությունները կատարող հրշեջ-փրկարարը գտնվում է պոմպի մոտ, մյուս հրշեջ-փրկարարը՝ հրշեջ ջրասյունակի մոտ: <i>Ծանոթություն.</i> 1. Վարժությունը կատարվում է մոսկովյան տեսակի հրշեջ ջրասյունակով: 2. Ջուր տալով վարժությունը կատարելու դեպքում նորմատիվային ժամանակին ավելացվում է 15 վայրկյան և ժամանակը արձանագրվում է ճնշումային կարճախողովակից ջուրը հայտնվելու պահին: 3. Դիտահորի բացված լինելու դեպքում նորմատիվային ժամանակից հանվում է մինչև 3 վայրկյան: 4. Այլ տեսակի հրշեջ հիդրանտի միջոցով վարժությունը կատարելու դեպքում նորմատիվային ժամանակին ավելացվում է 3-ից 10 վայրկյան:</p>
13.	<p>Հրշեջ ավտոմեքենայի տեղադրումը ջրավազանին՝ միացնելով երկու</p>				<p>1. Հրշեջ ավտոմեքենան կանգնեցված է բաց ջրավազանի մոտ, շարժիչը աշխատում է ցածր պտույտներով: Հրշեջ գույքը ամրացված է նախատեսված տեղում: Հետևի փողրակային սայլակները հանված են:</p>

	(յուրաքանչյուրը 4մ կամ 5մ) ներքաշող փողրակները և ցանցը. ա) ամռանը բ) ձմռանը	75 (45) 80 (50)	80 (50) 85 (55)	90 (60) 95 (65)	2. Վարժությունը կատարվում է երկու հոգուց բաղկացած անձնակազմով (վարորդ և հրշեջ), որոնք գտնվում են հետևի անիվի մոտ: 3. Սկիզբ. հրամանի արձակում: 4. Ավարտ. շարժիչը միացված է պոմպին, ժամանակը արձանագրվում է պոմպի ճնշումային կարճախողովակից ջրի հայտնվելու պահին: <i>Ծանոթություն.</i> 1. Փակագծերում նշված է առանց ջուր քաշելու վարժության ժամանակը: 2. Նոր ավտոմեքենաների (ավտոմատ (էլեկտրոնային) ներքաշման համակարգով կահավորված) ջրի քաշելու դեպքում նորմատիվային ժամանակից հանվում է 15 վայրկյան (75՝ 60, 80՝ 65, 90՝ 75 և այլն):
14.	Մարտական բացազատում  ա) Ավտոբաքով տալով փողակներ (մեկ «Ա» և մեկ «Բ»), ճյուղավորման միջոցով, բանվորական գիծը՝ յուրաքանչյուրը երկու փողրակ և մայրուղին. 3 փողրակ 4 փողրակ 5 փողրակ 6 փողրակ  բ) Տեղադրելով սայլակավոր փողակ. ավտոբաքի օղակի կազմով  60մ հեռավորության վրա 80մ հեռավորության վրա	70 85 100 115	75 90 105 120	80 95 110 125	1. Մեքենան տեղադրված է հրշեջ հիդրանտին: Հրշեջ գույքն ամբողջությամբ ամրացված է: Խցիկների դռները փակված են: Շարժիչն աշխատում է ցածր պտույտներով: 2. Օղակը շարված է ավտոմեքենաների ցանկացած կողմում: 3. Սկիզբ. հրամանի արձակում: 4. Ավարտ. Հրշեջ ավտոմեքենան կանգնեցված է հրշեջ հիդրանտի մոտ, շարժիչը միացված է պոմպին, պոմպը լցված է ջրով (միայն ամռանը), փողրակագծերը փոված են, իրար միացված, փողակավորները ելման դիրքերում պատրաստ են աշխատացնել փողակները: <i>Ծանոթություն.</i> 1. Ջուր տալով մարտական բացազատում կատարելիս յուրաքանչյուր փողրակի համար նորմատիվային ժամանակին ավելացվում է 5 վայրկյան: Ժամանակը արձանագրվում է վերջին փողակից ջուրը հայտնվելու պահին: 2. Սանդուղքների միջոցով փողակները բարձրությունների վրա տալու դեպքում յուրաքանչյուր հարկի համար նորմատիվային ժամանակին ավելացվում է 10 վայրկյան: 3. Ձմռան ժամանակ վարժությունը կատարելու դեպքում նորմատիվային ժամանակին ավելացվում է 5 վայրկյան:  1. Հրշեջ ավտոմեքենան կանգնեցված է բաց ջրավազանի մոտ: Հրշեջ գույքը ամրացված է նախատեսված տեղում: Շարժիչը աշխատում է ցածր պտույտներով: Խցիկների դռները փակ են: 2. Օղակը շարված է ավտոմեքենայի ցանկացած կողմում: 3. Սկիզբ. հրամանի արձակում:



Տեղադրելով ճապոնական տեսակի սայլակավոր փողակ. (75մմ տրամագծի)	35 45	40 50	45 55	4. Ավարտ. ավտոմեքենան կանգնեցված է ջրավազանին, շարժիչը միացված է պոմպին, պոմպը լցված է ջրավազանի ջրով, սայլակավոր փողակին միացված է 77մմ տրամագծի երկու փողրակ (75մմ տրամագծի սայլակավոր փողակին մեկ փողրակ), փողակավարները ելման դիրքերում պատրաստ են աշխատացնելու փողակը: <i>Ծանոթություն.</i> 1. Ջուր տալով վարժությունը կատարելու դեպքում յուրաքանչյուր փողրակի համար նորմատիվային ժամանակին ավելացվում է 5 վայրկյան և ժամանակը արձանագրվում է ջրի հայտնվելու պահին: 2. Ներքաշող կարճախողովակը ավտոմեքենայի այլ տեղում տեղադրված լինելու դեպքում նորմատիվային ժամանակին ավելացվում է 10 վայրկյան: 3. Ձմռանը վարժությունը կատարելու դեպքում նորմատիվային ժամանակին ավելացվում է 5 վայրկյան:
գ) Ավտոբաքով տալով մեկ ՓԳ-600  - երկու փողրակով ա) ամռանը բ) ձմռանը  - երեք փողրակով ա) ամռանը բ) ձմռանը	19 21  22 24	22 24  25 27	25 27  28 30	1. Ավտոմեքենայի շարժիչը աշխատում է: Հրշեջ գույքը ամրացված է նախատեսված տեղում: 2. Վարժությունը կատարվում է 2 հոգուց բաղկացած անձնակազմով (վարորդ և հրշեջ), որոնք շարված են հետևի ձախ անիվի դիմաց, մեջքով դեպի հրշեջ ավտոմեքենան: 3. Սկիզբ. հրամանի արձակումը: 4. Ավարտ. շարժիչը միացված է պոմպին, փողրակագիծը փռված է: Հրշեջ-փրկարարը կանգնած է փողակի ելման դիրքում, վարորդը՝ պոմպի մոտ: <i>Ծանոթություն.</i> Փրփուր տալով վարժությունը կատարելու դեպքում յուրաքանչյուր փողրակի համար նորմատիվային ժամանակին ավելացվում է 7 վայրկյան և ժամանակը արձանագրվում է փողակից փրփուրը հայտնվելու պահին:
դ) Ավտոբաքից տալով մեկ «Բ» փողակ - 2 փողրակով ա) ամռանը բ) ձմռանը  - 3 փողրակով	15 (12) 17 (14)  21 (18) 23 (20)	17 (14) 19 (16)  23 (20) 25 (22)	20 (17) 22 (19)  26 (23) 28 (25)	1. Հրշեջ ավտոմեքենայի շարժիչն աշխատում է: Փողրակները դարսված են կողային խցիկներում և ամրացված են: 2. Վարժությունը կատարվում է 2 հոգուց բաղկացած անձնակազմով (վարորդ և հրշեջ), որոնք շարված են ավտոմեքենայի հետևի անիվի մոտ: 3. Սկիզբ. հրամանի արձակումը: 4. Ավարտ. շարժիչը միացված է պոմպին, փողրակագիծը փռված է: Հրշեջ-փրկարարը գտնվում է փողակի ելման դիրքում, վարորդը՝ պոմպի մոտ: <i>Ծանոթություն.</i>

	ա) ամռանը բ) ձմռանը				1. Փակագծերում նշված են ծախսածն դարսված փողրակների ցուցանիշները: 2. Ջուր տալով վարժությունը կատարելու դեպքում յուրաքանչյուր փողրակի համար նորմատիվային ժամանակին ավելացվում է 5 վայրկյան: Ժամանակը արձանագրվում է փողրակից ջուրը հայտնվելու պահին: 3. «Ա» Փողակ տալու դեպքում յուրաքանչյուր փողրակի համար նորմատիվային ժամանակին ավելացվում է 7 վայրկյան: 4. Փրփուր տալու դեպքում յուրաքանչյուր փողրակի համար նորմատիվային ժամանակին ավելացվում է 7 վայրկյան:
	ե) տեղադրելով մեկ հիդրոէլևատոր, մայրուղային և դուրս գցող փողրակագծերից յուրաքանչյուրը 40 մետր:	40	45	50	1. Հրշեջ գույքը գտնվում է ավտոմեքենայում և ամրացված է: Խցիկների դռները փակված են: Անձնակազմը շարված է ավտոմեքենայի ցանկացած կողմում: 2. Սկիզբ. հրամանի արձակումը: 3. Ավարտ. հիդրոէլևատորը տեղադրված է, փողրակագծերը փռված և միացված: <i>Ծանոթություն.</i> 1. Մայրուղային կամ դուրս գցող փողրակագծերը երկարացնելու դեպքում յուրաքանչյուր 20մ փողրակի համար նորմատիվային ժամանակին ավելացվում է 15 վայրկյան:

**Ծանոթություն.**

1. Բոլոր վարժությունները կատարվում են մարտական հագուստ-հանդերձանքով (ծեռնոցները հագնում են անհրաժեշտության դեպքում):
2. Անհատական վարժությունների ժամանակը հաշվարկվում է կախված տարիքից.
  - 1) մինչև 30 տարեկան – այնպես, ինչպես ցույց է տրված նորմատիվային ժամանակում.
  - 2) 30-ից 40 տարեկան – նորմատիվային ժամանակին ավելացվում է 5%-ով.
  - 3) 40-ից բարձր – նորմատիվային ժամանակին ավելացվում է 10%-ով:
3. Մինչև 6 ամիս ծառայության ժամկետ ունեցող անձնակազմի համար նորմատիվային ժամանակին ավելացվում է 10%-ով: